ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՌԻՄՆԱ ՍՊԸ-ն ՊՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-2023/5 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
6	ՌԻՄՆԱ	ՌԻՄՆԱ	բաճկոն-տաբատ	ՌԻՄՆԱ ՍՊԸ	Բաճկոն - տաբատ: Կիսաբրդյա բաճկոնը կազմված է լանջափեշերից, մեջքից, օձիքից և թևքերից: Լանջափեշերը միացվում են կենտրոնական շղթայով, կոկետկայով, լանջափեշերի վրա վերևից մշակվում են ուղահայաց կենտրոնական ծալվածքով վրադիր գրպաններ, գրպանների ձևավոր կափույրները կոճկվում են 2 պաշտպանական գույնի 14մմ ալյումինե ՀՀ զինանշանով կոճակներով: Կողային գրպանները շեղակի կտրվածքով, շղթայով կոճկվող: Բաճկոնը գոտիով,

						կողքերից էլաստիկ ժապավենով ձգված: Օձիքը ծալովի, օձիքի միացման կարում մշակվում է կախիչ, թևերը ներկարված՝ պաշտպանական գույնի 14մմ պլաստմասե երկուական փակ կոճակով կոճկվող մանժետներով: ՈՒսադիրների շրջանում 2 փակ օղակներ և 2 կամրջակներ ուսադիրների ամրացման համար: Աստառը՝ մետաքսյա կամ համարժեք դեղնականաչավուն գույնի կտորից: Ձախ լանջափեշին ներսամասից մշակվում է կտրվածքով ծոցագրման, որը կոճկվում է մեկ պլաստմասե կոճակով և օղակով: Ազատթող տաբատը կազմված է առաջամասից, հետնամասից և գոտուց: Առաջամասը՝ կողային գրպաններով: Աջ հետնամասում կտրված գրպան՝ կափույրով, որը կոճկվում է մեկ պլաստմասե կոճակով և օղակով: Գուլֆիկը մշակվում է շղթայով, որը գոտու մասում կոճկվում է մետաղյա կեռիկով և մեկ կոճակով: Գոտին 6 հատ կամրջակներով, գոտեփոկի անցկացման համար: Կողային

					կարերում անցկացվում է 1.5-2մմ լայնությամբ կապույտ կամ կանաչ գույնի մահուդից երիզներ: Առաջամասում, մինչև ծնկները մշակվում է մետաքսյա կամ համարժեք դեղնականաչավուն գույնի կտորից աստառ: Փողքերը ծալված, մաքրակարված: Համազգեստի երեսացուն ` 2311 արտիկուլի կամ համանման կիսաբրդյա դեղնակա¬նա-չավուն գույնի գործվածքից 300 գրամ 1մ2 մակերեսային խտությամբ 75% բրդի և 25% պոլիէսթեր բաղադրության: Արտաքին տեսքը՝ համաձայն հաստատված նմուշի: Արտադրվում են 44/2 մինչև 64/6 չափս-հասակի: Բաճկոնի վրադիր գրպաններից մեկի կոճակից պետք է կախված լինի պիտակ, պիտակի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը, ներսի կողմից կարվում է արտադրանքի չափս-հասակի ստուգիչ պիտակ: Փաթեթավորումը՝եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 10 լրակազմ, տեսականին

					պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, 1 պարկի մեջ՝ 1 լրակազմ: Արկղերի չափսերը պետք է համապատասխանեն համազգեստի չափսերին, որպեսզի համազգեստը չճմրթվի: Արկղերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսը տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը: Պատվիրատուի պահանջով, մատակարար կազմակերպությունը պետք է ներկայացնի գործվածքի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ ՀՀ –ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն :

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

РИМНА ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՊՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-2023/5 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
6					